երիտասարդ, ուրեմն եւ չափազանց հետաքրքիր լինելով՝ բաց է անում արկղը. դուրս է գալիս, որ այնտեղ պահուած է նրա՝ կախարդի մօտ ապրած տարիները, եւ նա իսկոյն դառնում է ալեւոր ծերուկ, այսպիսով անմիջապէս պատիժ ստանալով իր հետաքրքրութեան համար:

Միւս աղջիկները չունէին նոյն աշխոյժը եւ Դեկուսկէի առջեւ բոլորովին կորչում էին:

Բայց շատ գեղեցիկ էր ջրվէժների պարը, որ նրանք բոլորը միասին կատարեցին: Ամեն մի աղջիկ ձեռքին ունէր սպիտակ շորի մի նեղ փաթեթ, որը պարի ժամանակ արձակում էր, որպէս մի երկար շերտ. շերտերը ծածանւում էին գեղեցիկ գալարումներով եւ ճշմարիտ որ նմանում էին քմահաճ վիժումով թափւող ջրվէժին:

Այդ միջոցին մեզ համար քաղցրեղէն բերին մանրիկ պնակների վրա դրած, որոնց ձեռք տալ սակայն վախում էինք, այնքան անհրապուրիչ էր նրանց տեսքը: Իմ ուշադրութիւնս գրաւել էին խիստ փոքրիկ, կլորիկ խնձորները:

—Ի՞նչ էք կարծում, ի՛նչ բան է սա.— հարցրեց ինձ՝ մօտս նստած տիկինը, իմ հետաքրքրութիւնը նկատելով:

—Խնձո՛ր,— ասացի ես:

—Ապա փորձեցէք,— ժպտաց նա:

Ես ձեռք տւի մէկին եւ անմիջապէս ետ քաշեցի ակամայ զզւանքով: Կարմիր մաշկը ներս ընկաւ մատերիս տակ: Դրանք՝ կճեպը հանած, պինդ խաշած ձուեր էին, cocotte-ի նման քսւած ու ներկւած, իսկ մէջը խրած կոթը բոլորովին խնձորի տեսք էր տալիս նրանց:

Բոլորը ծիծաղեցին, ու ոտքի ելանք:

Գէյշաները մեզ նոյն սիրալիր ժպիտով ճամփայ դրին,